



ԱՐԴԻ ԱՊԱԵՐԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՐՈՎ

ԶԵՉԵՆԻՈՅ ՏԱԳՆԱՊԸ

ԱԻԵԼԻ ՍՐԱԾ Է

ԿԸՍԵ Ա. ՄԱՍԽԱՏՈՎ

Զեչեն ըմբոստ դեկավար Ասյան Մասխատով երեկ նկատել տուաւ, որ Մոսկուա սխալ կը գործէ երբ Արպի Ապաւելի սպանութիւնը կը համարէ մեծ իրագործում մը՝ անջատողական շրջանին մէջ կատարեալ խաղաղութիւն հաստատելու ճամբուն վրայ:

Ասյան Մասխատով, որ հապուազիւտօրէն հարցազրոյց կը շնորհէ մամուլին, «Բոմբասանք Վլասը» շաբաթաթերթին յայտնեց, որ սպաննուողներուն տեղերը կ'առնեն նորերը, որոնք կ'ուզեն վրէժ լուծել: Հետեւաբար պայքարը հիմա աւելի սրած է:

Մասխատով նշեց, որ տագնապին վերջ տալու միակ միջոցը խաղաղ բանակցութիւններն են: «Կը հասկնամ, որ մեզի համար դժուար է լուծում մը գտնել: Մակայն աւելի լաւ է անվերջանալի բանակցութիւններ վարել, քան մղել անվերջանալի պատերազմներ», ըսաւ ան:

Զինաստանի նախագահ Ճիանկ Ծեմին ընթացիկ ամսուան ընթացքին պիտի այցելէ Մոսկուա, Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի հետ վեհաժողով մը կայացընելու համար, հաղորդեց Զինաստանի արտաքին գործոց նախարարութեան մէկ բանբերը երեկ:

Մամլոյ ատուլիսի մը ընթացքին բանբերը ըսաւ, որ Ճիանկ նաեւ պիտի այցելէ Պիտոնուսիա, Ուքրանիա, Մոլտաւիա եւ Մալթա: Զինաստանի նախագահին շրջապտոյտը պիտի երկարի 15 Յուլիսէն մինչեւ 25 Յուլիս:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԵԳԻՊՏՈՍ

ԶԱԽԱԿՍ ԻՆԾԻ ՊԻՏԻ ԶՅԱԶՈՐԴԷ

Կ'ԸՍԵ ՀԻՒՍՆԻ ՄՈՒՊԱՐԱՔ

Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբ հերքեց այն լուրերը, ըստ որոն, իր ազան կը պատրաստէ, իրրեւ իր յաջորդը:

«Մուսաուար» շաբաթաթերթին կողմէ հրապարակուած հարցազրոյցի մը մէջ, Մուպարաբ ըսաւ, որ այս հարցին գծով շատ մը լուրեր ու յօդուածներ հրապարակուեցան արաբական ու ոչ արաբական թերթերու կողմէ: Ան դիտել տուաւ, որ մտահոգուած ու հետաքրքրուած չէ այս հարցով, որովհետեւ երբեք չի

Շաբ.ը՝ էջ 10

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՐՈՔ ԿԱՐԵՒՈՐ ԳՈՐԾԱԿԻՑ ՄԸՆ Է

ԿԸՍԵ Խ. ՍՈՆԱՆՍ

Եւրոպական Միութեան արտաքին հարցերու գլխաւոր պատասխանատուն՝ Խալիէ Սոլանա, յայտնեց, որ Ե. Միութիւնը Հիւսիսային Աֆրիկէի մէջ կարելոյ ու բանալի գործակից մը կը նկատէ Մարոքը, որուն հետ կ'ուզէ աւելի ամուր քաղաքական կապեր հաստատել:

Սոլանա, որ կը խօսէր Ռապաթի մէջ, ըսաւ նաեւ, որ Եւրոպական Միութիւնը կ'ուզէ ոչ միայն տնտեսական ու առեւտրական կապերը ամրապնդել, այլեւ քաղաքական կապեր հաստատել:

Մարոք այցելութեան ընթացքին, Սոլանա տեսակցութիւններ ունեցաւ մարոքի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ, որոնց կարգին էին քաղաքապետ Ելբայը Մուլայ Ռաշիտ, վարչապետ Ապտէլուահման Եուսէֆի եւ արտաքին գործոց նախարար Մուհամետ Պեմայսա:

Եւրոպական Միութիւնը ընկերակցութեան ու գործակցութեան համաձայնագիրներ ստորագրելու համար, բանակցութիւններու ձեռնարկած է միջերկրականեան 12 երկիրներու հետ: Պարսեթունայի գործընթացին լոյսին տակ, Եւրոպական Միութիւնը կը նախատեսէ 27 երկիրներէ կազմուած Եւրոմիջերկրականեան ազատ առեւտուրի գօտի մը հաստատել մինչեւ 2012: (ՌՈՅԹԸՐԶ)

ՄԱԿԵՂՈՆԻՈՅ ՄԷՋ՝ ԶԻՆԱԴՈՒԼ

Մակեդոնիա եւ ծագումով ալպանացի ըմբոստները երեկ համաձայն գտնուեցան ՕԹԱՆԻ կողմէ հաստատուած պինադուլին: Անիկա ի պօրու պիտի դառնար 5 Յունիսի կէս գիշերէն սկսեալ:

Մակեդոնիոյ մէջ օտար դիւանագէտներ յայտնեցին, որ պինադուլը առանձին քայլն է այն երկար եւ խոչընդոտներով լեցուն ճամբուն վրայ, որ կրնայ խաղաղութեան հասցնել տագնապին առնչակից կողմերը: Անոնք շեշտեցին, որ Մակեդոնիոյ մէջ «կարծր»ները պինադուլին համաձայնութիւն տուած են

այս համոզումով: Մակեդոնիոյ պաշտպանութեան ախարարութեան աղբիւրներ ըսին, որ պինադուլը մաս կը կապմէ քաղաքական համաձայնութեան մը, որ պէտք է կնքուի մինչեւ 15 Յուլիս, երբ ՕԹԱՆեան ուժեր Մակեդոնիա մուտք պիտի գործեն Ալպանի Ապտագրութեան Բանակին պէնքերը հաւաքելու համար, եթէ այս վերջինը համաձայն գտնուի:

Այլ պաշտօնատար մը նշեց, որ պինադուլի համաձայնութիւնը գոյացած է ՕԹԱՆի ճիգերով, արեւմտեան պինակցութիւնը Մա-

կեդոնիոյ մէջ վերածուած է քաղաքական գլխաւոր դերակատարի, նկատի ունենալով որ անիկա պինադուլի առանձին համաձայնութիւններ գոյացուցած է Մակեդոնիոյ իշխանութիւններուն եւ ալպանացի ըմբոստներուն հետ:

ԾԱՆՐ ԲԱՆՈՒՄՆԵՐ

Զինադուլի համաձայնութեան գոյացումէն անմիջապէս ետք ծանր բախումներ արձանագրուեցան Մակեդոնիոյ բանակային ուժերու եւ ալպանացի ըմբոստներու միջեւ թերովոյի մէջ:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՌՈՒՍԻԱ

«ԹՈՒ-154» ԻՆ ԱՐԿԱԾԸ ՀԱՐՅԱԿԱՆԻ ՏԱԿ Կ ԱՌՆԷ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՕԴԱՆԱԻԵՐՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ



Ջախջախուած օդանաւին բեկորները:

Ռուսիոյ տարածքին երեկ սուղի օր յայտարարուած էր, որ երկուշեւու համար Երեքաթիբի գիշեր իրքուցքի մէջ Ջախջախուած «Թուփոյեւ-154» տիպի օդանաւին արկածին 145 գոհերուն յիշատակը:

Մասնագէտներ, որոնք երեկ օդանաւին բեկորները կը քննէին, ըսին, որ ոչ մէկ տեղեկութիւն ունին՝ պարզելու համար արկածին տուն տուող պատճառները:

Օդանաւը անակնկալօրէն 850 մետր բարձրութենէն զահավիթած էր:

Յամենայնդէպ ինչ որ ըլլան արկածին տուն տուող պատճառները, Ռուսիոյ քաղաքային օդանաւորութեան վերջին տարիներուն ամէնէն ծանր արկածը հարցականի տակ կ'առնէ քաղաքային օդանաւերու ապահովութիւնը: Անոնք ժառանգ մնացած են նախկին Խորհրդային Միութենէն:

Նախագահ Վլատիմիր

Փութին հրահանգեց ստուգել քաղաքային օդանաւերու ապահովութիւնը եւ պատրաստել զեկոյց մը:

Ջախջախուած օդանաւը կը բանէր «Աերոֆլոթ»էն բաժնուած «Վլատիմիր Կոմարով»-ի կողմէ: Անոր մէկ պատասխանատուն յայտնեց, որ արկածահար օդանաւը երկու ամիս առաջ գնուած էր չինական ընկերութենէ մը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ ԿԸ ԲՈՂՈՔԵՆ

Թիֆլիսի մէջ Եհովայի վկաներու առաջնորդներ յայտնեցին, թէ դիմած են Մարդկային Իրաւանց Եւրոպական Ատեանին, որովհետեւ վրացի դատախազներ անտարբեր մնացած են իրենց դէմ գործուած խափանարարութիւններուն նկատմամբ: Լոնտոնի մէջ Եհովայի վկաներուն ներկայացուցիչ Փօլ Կիլլէս յայտարարած է, թէ Վրաստանի մէջ աղանդին ան-

դամները նուազագոյնը 77 յարձակումներու ենթարկուած են սրածայր բիւրերով պինուած խմբակներու կողմէ: Եհովայի վկաները այս արարքներուն համար կ'ամբաստանեն ծայրայեղական ուղղափառները:

Վերջերս, Եհովայի վկաները շրջանառութեան մէջ դրած էին տեսաւերիկ մը, որուն մէջ ուղղափառ հոգեւորականներու յա-

տուկ սքեմ հագած ձիաւորներ կը յարձակէին աղանդի տեղիներուն վրայ, կ'աւերէին եւ կը հրկիւզէին նշեալ աղանդին հրատարակութիւնները: Մարդկային իրաւանց պաշտպան խմբակներ յայտարարած էին, թէ այս բռնութիւնները մաս կը կապմեն ուղղափառ Վրաստանի մէջ կրօնական փոքրամասնութիւններու կազմած ձիաւորները:

Շաբ.ը՝ էջ 10

ԹՈՒՐՔ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ ԿԸ ՆԵՐԽՈՒԺԵՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՇԵՆՔԸ

Թուրք ցուցարարներ երեկ ներխուժեցին Ֆրանսայի մէջ գրնուող Եւրոպական Խորհրդարանին շէնքը՝ բողոքելով թուրքիոյ բանկերուն կացութեան դէմ: Մօպատրաստեալ քան ցուցարարներ բողոքամարտ ունեցան Սթրասբուրկի Ե. Խորհրդարանի շէնքին դահլիճներուն հետ:

Միւս կողմէ, քրքական բանկերուն կացութեան դէմ բողոքելու համար հացադուլի դիմած քուրք նախկին քաղաքական բանկարկեալ Մահմուդ Օզոնար մահացաւ, քանի մը ամիսներ հացադուլ կատարելէ ետք:

Օզոնարի մահով հացադուլի դադարեցուցում մահացածներուն թիւը թուրքիոյ մէջ կը բարձրանայ 27-ի: Անոնք կը բողոքեն բանկային քարէկարգումներու դէմ քսելով, որ մեծ սրահներէն բախարարկեալները առանձին խուցեր փոխադրելով, զանոնք կարելի է ռաբիկաններու «դիրին» գոհերու վերածել:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԻՐԱԳ Կ՝ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԷ ՄԱԿԻ ԲԱՆԱԶԵԻԸ

ՊԱՂՏԱՏ, 5 (ՌՈՅԹԸՐԶ)՝ Իրաք տակաւին կ'ուսուժնաւորէ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի այն բանաձեւը, որ հինգ ամիսով երկարաձգեց «Քարիւզի փոխարէն սննդանիւթ» ծրագիրը, հաղորդեցին իրաքեան աղբիւրները Հինգշաբթի օր:

Յիշեալ աղբիւրները աւելցուցին, որ քարիւզի նախարարութենէն բարձրաստիճան պաշտօնատարներ շանդիլուժներ կ'ունենան իրաքցի դեկավարներուն հետ, որոշում մը գոյացնելու համար նոր բանաձեւին հանգէպ, որ որդեգրուած էր Երեքշաբթի օր: Իրաքեան աղբիւրներ յայտնեցին նաեւ, որ շուտով պիտի յայտարարուի Պաղատի կեցուածքը բանաձեւին հանգէպ: «Քարիւզի փոխարէն սննդանիւթ» ծրագրի երկարաձգումը որեւէ որոշում կարելի չէ գործադրութեան գնել, եթէ Պաղտատ հաւանութիւն չտայ:

ԻՐԱՆ

ՄԱՐԴԱՍՊԱՆ ԿԻՆ ՄԸ ԿԱԽԱՂԱՆ ԲԱՐՁՐԱՑԱԻ

ԹԵՀՐԱՆ, 5 (ՌՈՅԹԸՐԶ)՝ 35 տարեկան իրանցի կին մը հրապարակաւ կախաղան հանուեցաւ մարդատապանութիւն կատարած ըլլալուն համար, հաղորդեց «ԻՐՆԱ» լրատու գործակալութիւնը:

Կինը, որուն անունը յայտարարութեան, չորս տարի առաջ ոսպանուած էր 65 տարեկան կին մը, արեւմտեան չրջանի Գուհաւալթ քաղաքին մէջ: «ԻՐՆԱ» աւելցուց, որ երկու ուրիշներ ալ կախաղան բարձրացան արեւմտեան եւ հարաւային չրջաններուն մէջ, զարժեալ մարդատապանութեան համար:

Իրան յաճախ մահաձիգներ կը գործադրէ թմրեցուցիչի մաքսանդուութեան եւ մարդատապանութեան յանցանքներուն համար՝ կիրարկելով իսլամական օրէնքը՝ շարիան:


ՍՈՒՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ԼԻՊԻԱԿԱՆ - ԵԳԻՊՏԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌ ՆՈՒԹԻՒՆ

Սուտանի կառավարութիւնը ընդունեց լիպիական - եգիպտական խաղաղութեան նախաձեռնութիւն մը, որուն հիմնական նպատակն է վերջ տալ քաղաքացիական պատերազմին, որ 18 տարիէ ի վեր կը հարուածէ երկիրը՝ աւելի քան երկու միլիոն գահէր խելով:

խաղաղարար նախաձեռնութիւնը կ'առաջարկէ կազմել փոխանցման հանգրուանի կառավարութիւն մը, որ պէտք է ներկայացնէ Սուտանի քաղաքական բոլոր թեւերը, յայտնեց արտաքին գործոց նախարարը՝ Սուլթան Թաւաթ Իսմայիլ: Նախարարը աւելցուց, որ Խարթումի կառավարութիւնը ամբողջութեամբ կ'ընդունի խաղաղութեան միացեալ նախաձեռնութեան ինք պայմանները: Իսմայիլ ըսաւ նաեւ, որ Լիպիայէն եւ Եգիպտոսէն կը պահանջուի անմիջա-

Շաբ.ը՝ էջ 10



AUTO RESTART

Իսկական ուժ

Բոլորին մատչելի գինը

Ճափոնական արհեստագիտութիւն

9000ԷՆ 24000 BTU

Պատին, գետին կամ առաստաղին վրայ ամրացուող տեսակներու հաւաքածոյ

Շեմ.- 04-718444, Ֆաքս.- 04-718555

UNILEC
EXCLUSIVE DISTRIBUTOR

ՄԱՀԱՊԱՏԻԺԻ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ԿՐՆԱՅ ԿԱՍԵՑՆԵԼ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ

3 Յուլիսին Եւրոպական խորհուրդի Նախարարներու կոմիտէի շրջանակներուն մէջ գործող Հայաստանի պարտաւորութիւններու վերահսկման «Ակոյի խումբի» ղեկավար Փիտրո իրարմէն Ակո «Արմէնփրէս» գործակալութեան յայտնած է, թէ խումբը յատուկ ուշադրութիւն կը դարձնէ Հայաստանի մէջ մահապատիժի ընդման խնդիրն, որուն վերաբերելով բաւական քննարկումներ կատարած են: Եւրոպական խորհուրդին անդամակցելէ ետք Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններէն մէկը մահապատիժի ընդմանն է:

Խումբի ղեկավարը տեսակէտ յայտնած է նաեւ 27 Հոկտեմբերի ոճրային արարքի գործով ամրաստանեալներուն նկատմամբ մահապատիժ կիրարկելու վերաբերելով: «Եթէ գործին զծով դատաւճիռ կայացուի, ատիկա տակաւին ձեռնով մը կարելի է ընդունել, բայց եթէ դատաւճիռը իրադրութիւն, ապա այդ մէկը շատ վատ արդիւնք կրնայ ունենալ եւ կրնայ մինչեւ իսկ յանգիլ Եւրոպական խորհուրդի մէջ: Հայաստանի անդամակցութեան կասեցման, նշած է Փ. Ակո:

Ան նաեւ յայտնած է, որ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի հետ իր հանդիպման ընթացքին նախագահը ըսած է, թէ իր պաշտօնավարութեան ընթացքին մահուան ո՛չ մէկ դատաւճիռ իրականացւած է եւ պիտի չիրականացուի:

ՎԱՐՉԱՊԵՏ ԱՆԴԱՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութիւնը կը հաղորդէ, թէ Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի որոշումներով իրենց աշխատանքին ազատ կացուցուած են կառավարութեան պրնթիքը քաղաքացիական օդանավորութեան գլխաւոր վարչութեան պետի տեղակալներ Երուանդ Ուրֆալեան, Վալերիկ Յարութիւնեան եւ Սամուէլ Մարգարեան:

Վարչապետին մէկ այլ որոշումով, Զարեհ Մարգարեան ազատ կացուցուած է Հայաստանի կառավարութեան աւելցման պետական գնումներու գործակալութեան պետի պաշտօնէն: Պետական գնումներու գործակալութեան պետ նշանակուած է Գալիկ Խաչատրեան:

ԱՐԱԳԱՆՈՏԻ ՄԱՐԶ

800 ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ԿԸ ՍՏԱՆԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԻՒՆ

Արագածոտնի մարզին մէջ վերջին 2 -3 տարիներուն Հայաստանի քաղաքացիութիւնը ստացած է աւելի քան 800 գաղթական:

Յայտնեք, որ մարզին մէջ գաղթականներուն թիւը 4 հազար 44 հոգի է՝ 1398 ընտանիք: Անոնց համար ստեղծուած են կարին, Գալեան եւ Զրամբար գիւղերը եւ Աշտարակ քաղաքի Նարեկ թաղամասը: Այսուհանդերձ չորս 300 ընտանիք տակաւին կը բնակի ժամանակաւոր կացարաններու մէջ:

Մարզպետարանի ընկերային պաշտպանութեան վարչութեան տուեալներով, իրենց ենթակայութեան տակ գտնուող հանրակացարանը, կը նախատեսուի հիմնովին վերանորոգել եւ յատկացնել գաղթական ընտանիքներուն:

ՆԱԽԱԳԱՀ Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆ ԿԸ ՏԵՍԱԿՑԻ ՔԱՆԱՏԱՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐՈՒ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

3 Յուլիսին Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկաղի Ղուկասեան տեսակցութիւն մը ունեցած է կարճատեւ այցելութեամբ մը Ստեփանակերտ եկած Քանաւայի մէջ Հայաստանի դեսպան Արա Պապեանի, Մոնթէպիլի փոխ քաղաքապետ Շուշիկ Էլիյեանի եւ խումբ մը քանաւայց գործարարներու հետ:

Տեսակցութեան ընթացքին նախագահ Արկաղի Ղուկասեան ըրաժք զննատեւ է քանաւայցութեան ներգրծումը Արցախի առջեւ ծառացած խնդիրներու լուծման գործին մէջ: Ան ըսած է նաեւ, որ քանաւայց կողմէն այդ խնդիրներուն լուծման համար գործնական առաջարկներու պարագային Լեւոնային Ղարաբաղի իշխանութիւնները պիտի ներկայացնեն անհրաժեշտ բոլոր ծրագրերները:

Զրուցակիցները անդրադարձած են Արցախ - Սփիւռք կապերու ամրապնդման եւ տնտեսական մարզին մէջ համագործակցութեան հեռանկարներուն:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՄՆԵՐԸ



Մանկապարտէզի շրջանաւարտները:



Նախակրթարանի շրջանաւարտները:



Միջնակարգի շրջանաւարտները:

Զեփիւր, Փէյթէքեան Սուրէնեան Ռիթա, Մարալ, Սվաճեան Դանիէլ, Թէրզեան Կարինէ եւ Շահինեան Նայիրի, Թորգոմեան Արա:

ՀԱՅ - ԱՐԱՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՎԵՐԱՀԱՅՈՂԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ

Հայաստանի դիւանոր դատախազ Արամ Թամազեան 4 Յուլիսին տեսակցած է Հայաստանի նախագահի վերահսկողութեան ծառայութեան հրաւերով պաշտօնական այցելութեամբ Հայաստան գտնուող Եգիպտոսի վարչական վերահսկողութեան ծառայութեան պատուիրակութեան հետ:

Կարեւոր նկատելով Հայաստանի եւ Եգիպտոսի վերահսկողութեան ծառայութիւններու, մասնաւորապէս զատառաքական մարմիններու համագործակցութիւնը, տնտեսական, պաշտօնական եւ կազմակերպութեան յանգումները վերահսկողութեան ծառայութեան մարզերը եւ սկզբունքները, ինչպէս նաեւ պատասխանած է անոնց հարցումներուն:

Հանդիպման ընթացքին առանձնապէս ընդգծուած է, որ Հայաստանի եւ Եգիպտոսի միջեւ հաստատուած փոխհարաբերութեան միտումներ ունեցող տնտեսական կապերու հետագայ խորացումը կը պայմանաւորէ նաեւ երկու բարեկամ պետութիւններու վերահսկողութեան ծառայութիւններու եւ զատառաքական մարմիններու սերտ համագործակցութիւնը:

Եգիպտոսի վարչական վերահսկողութեան ծառայութեան պետի տեղակալ, Ռիտա Ֆահմի Հիլմի յոյս յայտնած է, որ վերահսկողական գործառնություններ իրականացնող պետական կառույցներու համագործակցութեան նկատելի աշխուժացումը մեծապէս կը ծառայէ երկու երկրներու միջեւ տնտեսական կապերու խորացման եւ անդամակցային յանգումները վերահսկողութեան ծառայութիւններու միջոցով:

www.hamazkayin.com

ՀԱՅԱՍՏԱՆ - ԻՐԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՀԱՄԱՆԱԿԱՆ ՄԱՐՁԻՆ ՄԵՋ

1994 թուականին բարեկամական կապեր հաստատուեցան Հայաստանի «Հրաշեայ Աճառեան» եւ Թեհրանի «Ագատ» համալսարաններուն միջեւ: Երկու համալսարաններուն մէջ բացուեցան պարսկերէն լեզուի ու գրականութեան եւ փոխադարձաբար հայերէն լեզուի եւ գրականութեան բաժանմունքներ, որոնք արդէն շրջանաւարտներ ունեցած են: Համալսարանները նաեւ կը գործակցին դասագիրքերու փոխանակումով, ձեռնարկներ կազմակերպելով եւ գեղարուեստական գրականութեամբ իրարու օգնելով: Իրեւալոս գործակցութեան արդաւոր, «Հրաշեայ Աճառեան» համալսարանը տարուէ տարի կ'ամրոգւնայ պարսկերէն գրականութեամբ: Մօտ օրէն համալսարանին մէջ պիտի բացուի պարսկերէն գրականութեան դրաղարան, ուր պիտի գտնուին 2000 դիրքեր՝ պարսկերէնով, որոնք մէջ կ'ան ազգագրական, գեղարուեստական, պատմական եւ գրական կտորներ: Այդ գրադարանի գիրքերուն վրայ 2 Յուլիսին աւելցած են Հայաստանի մէջ իրանի պետական տարածքում մէջ նուիրուած 300 դիրքերը:

ՀԱՅ - ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ Կ'ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՊՐՈՑՆԵՐՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Էդուարդ Ղազարեան 3 Յուլիսին շնորհակալագրեր յանձնեց Հայ - ամերիկեան կրթական հիմնարկութեան անդամներ՝ Նշան Փիրուսեանին, Հրանդ եւ Սթեփան Տէր Սահակեաններուն, Ռայֆ եւ Սաւի Թուֆէքեաններուն, Ալէք եւ Ալեան Պաղտասարեաններուն, ուրիշներու եւ բարերարներու, որոնց շնորհիւ Հայաստանի եւ Արցախի մէջ երեք տարուան ընթացքին դպրոցներու կառուցման ծրագրեր շրջանակներուն մէջ վերականգնուած եւ վերանորոգուած է 53 դպրոց:

Է. Ղազարեան յայտնեց, որ Հայաստանի կրթութեան նախարարութեան եւ կրթական հիմնարկութեան համագործակցութիւնը Հայաստան - Միւլուք կապերու փայլուն գրեւորումներէն մէկն է:

Դպրոցներու կառուցման ծրագրին աշխարհագրութիւնը, ինչպէս նաեւ նախարար, օրէ օր կը մեծնայ յառաջիկային կը նախատեսուի վերանորոգել 35 դպրոց եւ՝ Հայաստանի, Արցախի եւ Զաւաթի մէջ: Անոնք գլխաւորաբար Հայաստանի համար ռազմավարական նշանակութիւն ունեցող բարձր լեւնային եւ եկուստացած եւ սահմանամերձ պիլիքերու դպրոցներ են:

Հայ - ամերիկեան կրթական հիմնարկութիւնը արդէն երկար տարիներէ ի վեր կրթութեան շրջանը կը յատկացնէ նաեւ Երեւանի Պետական համալսարանի եւ ծարտարագիտական համալսարանի յաղողակ եւ կարիքաւոր ուսանողներուն:

ՀՈՎԻ ՈՒԺՈՎ ԲԱՆՈՂ ԵԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Ամերիկեան Ճերայտ Գեւորգեան հիմնադրամի ֆինանսաւորմամբ Հայաստանի մէջ կ'իրականացուի ծրագիր մը, որուն նպատակն է երկրի հովի ուժով ստեղծուած ուժանիւթի ներուժի ուսումնասիրութիւնը:

Այս մասին «Նոյնաճ Տապալ» գործակալութեան յայտնած է Հայաստանի ուժանիւթի կարգաւորող յանձնախումբի անդամ Ռոպէրթ Նարազեան, որուն համաձայն, ծրագիրը կ'իրականացուի ամերիկեան «Սոլար» ինքնուրուշ ընկերութեան հայկական մասնաճիւղին կողմէ:

Ընկերութիւնը ներկայիս արագ աշխատանքներ կը տանի Սոփի շրջանին մէջ, ուր եօթը աշտարակներու օգնութեամբ կ'ուսումնասիրուի շուրջ 200 հեկտար տարածութիւն:

Նախնական արդիւնքներուն համաձայն, այդ վայրին մէջ կարելի է հաստատել էլեկտրակայան՝ մօտ 20 մեկաւաթի հզօրութեան սահմաններուն մէջ:

Միաժամանակ Ռ. Նարազեան նշած է, որ հովի ուժով բանող էլեկտրակայան կառուցման համար անհրաժեշտ է ունենալ հովի արագութեան եւ տեւողութեան մասին տուեալներ, որոնք պիտի ստացուին առնուազն մէկ տարուան ուսումնասիրութիւններէ ետք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄ՝ ՍՈՉԻՒ ՄԷՋ

Վերջերս Հայ - ռուսական դիւանագիտական յարաբերութիւններուն մէջ արձանագրուեցաւ նոր էջ մը, երբ Սոչիի մէջ բացուեց կատարուեցաւ Ռուսիոյ հարաւային շրջանին մէջ Հայաստանի ժամանակաւոր հիւպատոսարանին:

Ըստ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան հասարակութեան հետ յարաբերութիւններու վարչութեան, Հայաստանի ժամանակաւոր հիւպատոս նշանակուած է Ռուսիոյ մէջ Հայաստանի դեսպանատան հիւպատոսական բաժանմունքի աշխատակից Արթուր Սարգսեան:

Յայտնեք, որ այսուհետեւ Հայաստանի քաղաքացիները Սոչի քաղաքին մէջ կրնան Հայաստանի անձնագիր ստանալ անվաւեր ճանչցուած նախկին խորհրդային անձագիրներուն փոխարէն, ինչպէս նաեւ օգտուել բոլոր տեսակի հիւպատոսական ծառայութիւններէ:

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՅԼ ՀԱՐԹՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԵՆ

Նախապես հաղորդած էինք, որ 26ԷՆ 27 Յունիս Լիզպոնի մեջ տեղի ունեցած Է ԸՆկերվար Միջազգայնականի Կիմբեռու Կազմակերպութեան գործադիր մարմնիի եւ պիւրոյի հերթական ժողովը, որուն նիւթն էր «Գործի եւ աճնճական կեանքի հաւասարակշռութեան հարցը կիմբեռն մօտ»։ Ժողովին Ը. Յ. Դաշնակցութիւնը կը ներկայացնէր Շաղիկ Մարուխեան, որուն հետ հայրենի «*Երկիր*» թերթը ունեցաւ ստորեւ տրուած հարցազրոյցը։

ՀԱՐՑՈՒՄ.- Նախ՝ մի քանի խօսքով ներկայացրէք. խնդրեմ. ԸՆկերվար Միջազգայնականի կանանց կազմակերպութիւնը. նրա ղեկը ժամանակակից կնոջ կեանքում եւ գործունեութեան հիմնական ուղղութիւնները։

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ընկերվար Միջագայնականի կանանց կազմակերպութիւնը բաւականին ներկայացուցչական մի կառույց է, ուր, անշնան բացառութիւններով, ներկայացուած են աշխարհի գրեթէ բոլոր երկրների ընկերվարական կուսակցութիւնները։ Այս կարգի հաւաքներ տեղի են ունենում տարին երկու անգամ, որոնց ընթացքում քննարկում են յարափոփոխ աշխարհում կնոջ դերի եւ տղամարդու հետ նրա իրաւահաւասարութեան խնդիրներին առնչուող հարցեր։ Բացի այս ժողովները, տեղի են ունենում նաեւ կանանց հարցերով տարբեր ընոյթի սեմինարներ եւ խորհրդաժողովներ։

Այս ամէնի նպատակը մէկն է՝ համաշխարհային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրել կանանց խնդիրներին, այնպէս անել, որ կիին ունենայ իր տեղն ու ղերը հասարակական կեանքում, մի խօսքով՝ իրականացնել կնոջ իրաւունքների պաշտպանութիւնը։ Ասեմ նաեւ, որ Ընկերվար Միջազգայնականի կանանց կազմակերպութիւնն իր այս առաքելութիւնն իրականացնում է տարբեր մօտեցումներիով։

Մի կողմից փորձ է արւում յետամընաց երկրների առումով վեր հանել կանանց իրաւունքների ոտնահարման որոշակի դրսեւորումներն ու լուծումներ առաջարկել, իսկ միւս կողմից՝ ճիգեր են գործադրւում այդ փուլն անցած եւ գործացման բարձր մակարդակի վրայ գտնուող երկրներում օրէնսդրական դաշտ տեղափոխել կանանց եւ տղամարդկանց իրաւահաւասարութեան խնդիրները։

Հ.- Հետաքրքրական է իմանալ՝ ինչպիսի՞ն է այդ միջազգային կազմա-

ՆՐԱՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԱՅՍՏԵՂ ԶԻ

Վրացական «Թալիխ-սի» թերթում այսպիսի վերնագրով լույս է տեսել քաղաքագէտ Պետրօ Կորիշվիլու ընդարձակ յօդածը, որի հեղինակին անհանգստացնում է ոչ միայն այնտեղ այլ ազգութիւնները համայնքների խիտ բնակուածութեան աշխուժացումը, այլեւ՝ 50 տարի առաջ այս տեղերից վերաբնակեցուած թուրք բնակչութեան վերադարձի խնդիրը։

Բոլորին յայտնի է 1997 թուականի Մարտի 12ին Պիճէջքում կայացած թուրք - մեախեթցիների համագումարը, որտեղ նրանք յայտարարեցին՝ «Պահանջում ենք, որ մեր բազմաշարժար ժողովըրդին տրուել իրաւական կարգավիճակ թրքական հանրապետութեան կազմում, ինչպէս դա եղել է Ախալցխայի փաշայուհեթեան ժամանակ։ Պահանջում ենք նաեւ, որ Ախալցխայի թուրքերին տրուել թուրքիայի քաղաքացիութիւն»։

Ընդառաջ գնալով այդ պահանջներին, թուրքերան նրանց առաջարկեց բաւական մեծ տարածք եւ որոշակի արտօնութիւններ։ Թւում է, թէ մենք անհանգստանալով պատճառ չունենք, նրանց ժամանակին առաջարկուեց եւ տարածք, եւ քաղաքացիութիւն։ Ուղղակի բանն այն է, որ իրականում նրանց պէտք են վրացա-

կերպութեան դիրքորոշումը Հայաստանում կանանց ընկերային խնդիրներին նկատմամբ։ Ձեր նշած երկրներից որո՞նց դասին Է պատկանում մեր հանրապետւիւնը։

Պ.- Հայաստանի եւ յետխորհրդային միւս հանրապետութիւնները մասին գերիշխող է այն կարծիքը, որ այդ երկրներն առաջոժ գտնւում են վարգացման շատ ցածր մակարդակի վրայ, եւ նրանց յատուկ են այն դժուարութիւնները, որոնք այսօր դիմագրաւում են ափրիկեան երկրները։ Սակայն, մեր խորին համոզմամբ, դա այդպէս չէ՝ դոնէ Հայաստանի առումով, եւ այն չափանիշները, որ պոլութիւն ունեն մեր հասարակութեան մէջ երբեք չի կարելի միեւնոյն հարթութեան մէջ գիտել կիսավայրենի ցեղերի սովորութիւնների հետ։

Ի դէպ, հէնց այս խնդրի շուրջ էր իմ յանպատրաստից ելոյթը, որի մտայնացումը կալցաւ տարբեր ծայրայեղ գեկոյցներից յետոյ։

Ինձ թւում է՝ մեզ յաջողուեց ժողովի մասնակիցներին համոզել, որ այդ ծայրայեղութիւնների միջեւ կայ մի միջին աստիճան եւս, որի վրայ է գտնւում Հայաստանը։ Պատմական մի փոքր ակնարկի ձեւով նրանց հրամցուեցին այն փաստերը, որ դեռեւս մեր առաջին հանրապետութեան ժամանակ, երբ իշխանութեան գլուխ էր Հ. Յ. Դ.-ն, մեր խորհրդարանը օրէնք է քուէարկել կանանց ընտրելու եւ ընտրուելու մասին, որ խորհրդարանում ունեցել ենք չորս կին պատգամաւոր եւ նոյնիսկ կին ղեսպաններ՝ տարբեր երկրներում։ Այնուամենայնիւ, մենք չժխտեցինք, որ հայ կինը իր հայրենիքի ճակատագրի հետ կապուած լուրջ դժուարութիւններ է դիմագրաւում եւ հանրապետութիւնում առկայ գործադրկութեան պայմաններում գրեթէ դարձել է ընտանիքի միակ կերակրողը։ Բացի այդ, հայ կնոջ այսօրուան ճնշւածութիւնը պայմանաւորւում է նաեւ չընդունւմ տիրող բարդ քաղաքական իրավիճակով։

«ԵՐԿԻՐ»

ԱՅԴԱԿ

ԵԶԻՏԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՆՇՈՒՄ Է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Վերջին տարիներին, Հայաստանում դժուարին ժամանակահատուածում, երբ որոշ մարդիկ յուսալքուեցին, եւ արտապաղթր սուր բնոյթ կրեց, Հայաստանի տարբեր մարզերում բնակուող եգիտի մտաւորականութիւնը համախմբուեց եւ 2000 թուականի Մարտին ստեղծեց Եգիտիների Ազգային Կոմիտէն։ Միաձայն կոմիտէի նախադահ ընտրուեց Ազգային Ժողովի պետաիրաւական հարցերի մշտական յանձնախմբի աշխատակազմի փորձադէտ Ճամալ Սատախեանը։ Կոմիտէի նպատակն է եգիտարնակ գիւղերում ազգանպաստ գործունէութիւն ծաւալել։ Մարգերում ստեղծուեցին կոմիտէի մասնաճիւղերը։ 2001 թուականի Յունուարից տպալուում է կոմիտէի պաշտօնաթերթը՝ «Լալլը»ը։ Յայտնի է, որ հայ եւ եգիտի ժողովուրդները բարեկամութիւնը երկարամեայ է ու հաստատուն։ Դեռեւս 1828 թուականին Սղերթի եգիտի շէյխ Միրզան եւ հայ տէր Պօղոսը (քէշիշ Պոռոն), պեկավարելով աշխարհագորայիններին, Ռնսվան բերդի շրջակայքում պարտութեան մատնեցին թուրքական զօրքին։ Բազմաթիւ են նման ռազմական համադործակցութիւնները։

Պատմական փաստ է նաեւ, երբ 1915 թուականին թուրքական կառավարութիւնը բնաջնջման դատապարտւած հայերին տեղահանել եւ անապատներ է ցիրուցան արել՝ եաթաղանից մի կերպ ճողոպրած շուրջ 6000 հայերի Մինճարում եգիտիները, չնայած դժուարին, սուղ պայմաններին, ջերմ ընդունեցին իրենց միջավայրը՝ ապահովելով բոլոր կենսական պայմաններով։ Թուրքերն իմանալով այդ մասին, 6 բանադնաց ուղարկեցին եգիտիները մօտ, որպէսզի նրանք հայերին չսատարեն։ Եգիտիները, թուրքերի համար անսպասելի, մերժեցին այդ առաջարկը, ինչը գայրոյթ առաջացրեց եւ առիթ դարձաւ թուրքերի նոր յարձակմանը, այս անգամ եգիտիական բնակավայրերի վրայ։ Այնուհետեւ հայերը եւ եգիտիները համախմբուած հակահարուած տուեցին թուրքական զինուած խմբերին։

Ցեղասպանութեան մղձաւանջային տարիներին երկու ժողովուրդների բարեկամութեան խորհրդանիշն է դարձել բոլորին քաջ յայտնի գօրավար Անդրանիկի եւ եգիտի Ճահանկիր աղայի ռազմական համադործակցութիւնը հակաթուրքական կռիւներում։

Յայտնի է նաեւ, որ եգիտիներն իրենց զինուորներով գործօն կերպով մասնակցել են Բաշ Ապարանի եւ Սարդարապատի ճակատամարտերին (Գ. Ղարիբջանեան. «Աւարայրից մինչեւ Սարդարապատ»)։ Նրանք նոր էլ բացեցին երկու ժողովուրդների պատմութեան մէջ։ Ինչպէս հայերի, այնպէս էլ եգիտիների միայն քիչ մասը Վանի, Պայազէթի, Կարսի եւ Սուրմալուի մարզերից կարողացաւ հասնել Արեւելեան Հայաստան, նաեւ Վրաստան։ Թուրք բարբարոս-

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՆԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՆԸ

Շարքազոյց՝ Շայաստանի Գիտութիւնների ազգային ակադեմիայի Մանուկ Աբեղեանի անուակրականութեան հիմնարկի տնօրէն, բանասիրական գիտութիւնների դոկտոր Ազատ Եղիազարեանի հետ։

ՀԱՐՑՈՒՄ.- Պրն. Եղիազարեան, այսպիսի տեսակետ կայ, թէ քրիստոնեւորւելը «նքիսութեց» եւ դուրս մղեց մեր ազգային կրօնը։ Ի՞նչ կարծիքի եք այդ մասին։

ՊԱՏԱՍԽԱՆ.- Քրիստոնէութիւնն իր բոլոր թերութիւններով եւ պակասութիւններով հանդերձ, առաջինթաց քայլ էր մարդկային քաղաքակրթութեան մէջ. ոչ թէ ընդամէնը կրօնական, այլ՝ հօր մշակութային երեւոյթ։ Այնպէս որ, այս մօտեցումով նաեւ հայ գրականութեան մասին խօսել, այդ գրականութիւնը ճիշդ հասկանալ եւ գնահատել, առանց հասկանալու քրիստոնէութեան դերը հայ գրականութեան զարդացման մէջ, անհնարին է։ Այլ կերպ մենք չենք հասկանայ ո՞չ մեր միջնադարը, ո՞չ էլ նոր, ո՞չ էլ անգամ նորագոյն շրջանի գրականութիւնը։

Հ.- Այն, որ մենք առաջինը պետականօրէն ընդունեցինք քրիստոնեական կրօնը, եւ այլն, որ ողջ գրականութիւնը՝ սկսած Յով արիցը մինչեւ այսօր. ներթնում է քրիստոնեական գաղափարախօսութեամբ, ըստ ձեզ, ինչո՞ւ վ է պայմանաւորուած, գուցէ մեր ազգի եւութեա մը. մեր խորքը՝ վ...

Պ.- Այսպիսի դատողութիւն անելու համար, ի հարկէ աւելի լուրջ հիմք է պէտք։ Պէտք է մոռանալ, որ քրիստոնէութիւնը, իբրեւ պետական կրօն, մեզ անհրաժեշտ էր ոչ միայն հոգեւոր - մշակութային, այլեւ նախ՝ պետական - քաղաքական իմաստով. հայ ժողովուրդը պիտի ազատուէր օտար տարրերի ազդեցութիւնից։ Զրդ դարում մեր վիճակն այնպիսին էր, որ մենք քրիստոնէութեան մէջ գտանք մեր հոգեւոր անկախութիւնը։ Քրիստոնէութիւնը նոյնքան մերն է, որքան էր հեթանոսութիւնը։ Եւ դա շատ լաւ է երեւում հէնց մեր դիւցազնաշէպում։ Ժողովրդի ստեղծագործութիւնը, որում ծաղրւում են հոգեւորականները, տէրտէրները, իր խորքով քրիստոնէական է, որովհետեւ հաստատում է բարձրագոյն մարդկային արժէքներ՝ բարութիւնը, կարեկցանքը թոյլի հանդէպ, արդարութիւնը եւ այլն, իսկ այդ արժէքներն անպայման կապուած են քրիստոնէութեան հետ։

Հ.- Իբրեւ քրիստոնեական գրականութիւն՝ մենք ո՞ր նկիւնակներով եք ներկայանում աշխարհին։ Պ.- Նախեւառաջ, ի հարկէ՝ Գրիգոր Նարեկացիով։ Նարեկացու «Մատեան ողբերգութեան» բանաստեղծութիւնը, որի հազարամեակը կը նշուի չուստով

ների դէմ մղուած հերոսական մարտերում եգիտի ժողովուրդն ունեցաւ անմոռաց տեղանուններ՝ Չոպուխին, Ութէն, Թութակը, Թանաուրաքը, Աւա Ռաշը, Ռամաքուլին, Մինաքը, Կրիտաղը, Զօրը, Տերճամատը, Այաշկերտը, Աղբարանը եւ այլն։

Անդրկովկասում խորհրդային կարգեր հաստատւելուց յետոյ եգիտիները տարիներ շարունակ չկարողացան յիշատակել իրենց տեղահանութեան եւ բնաջնջման օրը։ Հայաստանում անկախութեան տարիներին հնարաւորութիւն ընձեռուեց աւելի պատշաճ ուշադրութիւն դարձնել այս ցաւոտ հարցին։ Եւ 1997ին Վրաստանի, նաեւ 1998ին՝ Հայաստանի եգիտիական համայնքները որոշեցին ամէն տարի Յունիսի 15ը յիշատակել Որպէս հազարաւոր անմեղ եգիտիների զոհերի օր։ Պէտք է մտածել նաեւ մի կարեւոր հարցի մասին. մինչեւ օրս եգիտիները չունեն 1915 թուականի եղեռնի զոհերի եւ արցախեան զոհուած ազատամարտիկների յուշարձան։ Ամէն տարի ի յիշատակ Թուրքիայում գոհուած եգիտի ժողովրդի, իւրաքանչիւրն այցելում է իր նախնիների գերեզմանը եւ երախտագիտութեան տուրք մատուցում նրանց։

Ղարաբաղեան շարժումը սկիզբ դրեց նաեւ եգիտիների ազգային գարթօնքին։ Եգիտիները հայերի հետ կողք-կողքի կուուեցին հայրենի հողի համար՝ հոգու խորքում ողբերուելով Ճահանկիր աղայի պատգամներով եւ տուեցին հերոսներ։ Ունեն 40ից աւելի զոհւածներ, որոնցից 3ը թաղուած են Եւարուրում։ Արցախեան շարժումն իսկական փորձութիւն էր եգիտի ֆիտայիների համար, որոնք մասնակցեցին Երասխաւանի, Գորիսի, Վալքի, Իջևանի ինքնապաշտպանական մարտերին։ Նրանց հետ կուուել են նաեւ եգիտի կանայք։

- Այս շարժումը լրացնում է եգիտի ժողովրդի հերոսական անցեալը, այսօր անթոյլատրելի է, երբ ոեւէ անհատ այն վերագրի իրեն։ Եգիտի ժողովուրդը հայ ազատամարտիկների հետ ինքնակամ եւ գիտակցաւոր է պալքալի ելել, այսպէս է մեկնարանում կոմիտէի նախադահ Ճամալ Սատախեանը։

Եգիտի ժողովուրդը 1800ական թուականներին մինչեւ 1918 թուականը՝ Սարդարապատ, Բաշ Ապարան, մինչեւ արցախեան ազատամարտ հաւատարիմ իր ուխտին, համագործակցեց հայ ժողովուրդի հետ՝ վճռական հարուած տալով թշնամուն։ Եւ առ այսօր հաւատարիմ իր նախորդ սերունդների աւանդոյթներին՝ հայ ժողովրդի հետ կիսում է եւ վիշտ, եւ ուրախութիւն։

ՈՎՍԱՆՆԱ ՄԱԳԱԹԵԱՆ

«Հայաստանի Հանրապետութիւն»

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՆԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՆԸ

քրիստոնէական ոգու բարձրակէտն է, հօօր, դասական մի գործ։

Ինչ-որ իմաստով մեր ողջ գրականութիւնը քրիստոնէական գրականութիւն է՝ ճրդ դարից մինչեւ մեր օրերը։ Պարզապէս ամէն դարաշրջանի գրականութիւն իր ձեւով է արձագանգել քրիստոնէութեանը։ Միջնադարում գրականութեան մէջ քրիստոնէական մտածողութիւնը՝ իր բոլոր երանգներով, համապարփակ երեւոյթ է։ Աշխարհիկ մտածողութիւնը չոչնչացրեց քրիստոնէականը։ Սկսուեց նրանց գոյակցութիւնն ու պալքաբը, որը տեւեց շատ երկար։ Այդպէս եւ նորագոյն ժամանակներում, օրինակ, Չարենցի եւ Տէրեանի «ոչ քրիստոնեայ» բանաստեղծութեան մէջ դժուարւէց ցոյց տալ քրիստոնէական մշակոյթից եկող տարրեր։ Մեծ լուեցին՝ Թումանեան ինքը, չէր ընդունում եկեղեցին, բայց միշտ «փնտռում էր» Աստծուն։ Եւ նրա փնտաածը, պարզ է, հեթանոս ասուած չէր, այլ դերադոյն մի էակ, որ եթէ չի էլ նոյնանում քրիստոնեայ Աստծու հետ, ապա շատ մօտ է նրան։ Ահա այդ «Անճառ Մին»ի (մէկ «Անճառ Մին» է ասում, մէկ՝, մէկ՝ Աստուած) միջոցով է նա «հաստատում» աշխարհի կարգն ու սարքը, «ամբողջացընում» աշխարհը։

Հ - Յոբելեանական այս տարում որեւէ միջոցաւում նախատեսել է գրականութեան հիմնարկը։

